**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

**«ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/68» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «25» օգոստոսի 2026թ.

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ**՝ Էդգար Ծառուկյան
**Հանձնաժողովի անդամներ**՝
Արա Սողոմոնյան
Լևոն Ստեփանյան
**Հանձնաժողովի քարտուղար**՝ Էլինա Պողոսյան:

**<u>ՕՐԱԿԱՐԳ</u>**

1. **«ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/68»** ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային աճուրդի **(https://eauction.armeps.am/)** համակարգի միջոցով ներկայացված հայտերը:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին:

3. **«ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/68»** ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:

4. Հաստատել ՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

5. Հաջորդ նիստի կայացման մասին:

**1. «ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/68» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային աճուրդի (https://eauction.armeps.am/) համակարգի միջոցով ներկայացված հայտերը**

---

---

(Է. Պողոսյան)

1.1 «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ–ի կարիքների համար **«բժշկական սարքերի»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/68» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը եղել է 11 օգոստոսի 2026թ.-ին, հակադարձ աճուրդ՝ 12 օգոստոսի 2026թ.-ին:

1.2 «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ–ի կարիքների համար **«բժշկական սարքերի»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/68» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1. | ԲԻ ԹՌԻ ԲԻ ՍՊԸ |
| 2. | ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ |
| 3. | Իվաֆարմ ՍՊԸ |
| 4. | ԻՆԷՅԴ ՍՊԸ |
| 5. | NordHealth Group |
| 6. | ՏԻԿԱՍՈՆ ՍՊԸ |
| 7. | Մեդէքսպերտ |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

**2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին**

(Է. Պողոսյան)

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները. **/Կից ֆայլ գնային առաջարկ/**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

**3. «ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/68 ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:**

(Է. Պողոսյան)

3.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտը **էլեկտրոնային աճուրդի (https://eauction.armeps.am/)** համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի՝ բաղառության «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի և «Իվաֆարմ» ՍՊԸ-ի հայտի որտեղ արձանագրվել էին հետրևյալ անհամապատասխանությունները.

**«Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն՝ մասնավորապես.**

**Հրավերի հավելված 1.1 կետով սահմանված առաջարկվող չափաբաժին 3-ի, ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին**

- **Պահանջվում է ՝ փակ ամրակի բարձրություն՝ 0.75–2.3 մմ կամ վավերացված համարժեք - ներկայացված է 0.75–2.0 մմ:**

**Փաթեթում չկա արտադրողի կոնկրետ հայտարարություն, որ 0.75–2.0 մմ շարքը կլինիկապես փոխարինում է պահանջված՝ մինչև 2.3 մմ ընդգրկող շարքին, հատկապես հաստ թոքային հյուսվածքի համար:**

- **Պահանջվում է առնվազն 12 ամրացնող նյութ- ներկայացված է 14 հատ:**

**Քանակը բավարար է, բայց արտադրատեսակը նույնականացված և ապացուցված չէ, նշված է Beijing Biosis Healing Biological Technology Co., Ltd., և խոստացվել է 14 հատ նյութ, սակայն բացակայում են.**

- **ապրանքային անվանումը և կատալոգային կոդը,**
- **45/60 մմ տարբերակների ցանկը,**
- **Alligator OCR քարթրիջների հետ կոնկրետ համատեղելիության ապացույցը,**
- **ՀՀ/ԵԱՏՄ գրանցումը,**
- **IFU-ն, ստերիլիզացման մեթոդը և պիտանելիության ժամկետը:**
- **Պահանջվում է ՝ ՀՀ/ԵԱՏՄ գրանցում- ներկայացված է «Կգրանցվի ներմուծման ժամանակ»:**

**Չի համապատասխանում ներկայացման պահանջին:**

- **Պահանջվում է ՝ 24-ամսյա երաշխիք:**

**Արտադրողի/լիազորված ներկայացուցչի երաշխիքային նամակ չկա , նշված 24 ամիսը մատակարարի հայտարարություն է, բայց չկա արտադրողի կամ պաշտոնական ներկայացուցչի երաշխիքային նամակ: Բացակայում են նաև ստեպլերային համակարգի.**

- **CE/EU Declaration of Conformity կամ այլ կարգավորող փաստաթուղթ,**
- **ISO 13485 վկայական,**
- **կենսահամատեղելիության/ռիսկի գնահատման հղումներ,**

- հայերեն IFU կամ հաստատված թարգմանություն:

- Ընդհանուր հայտարարությունը, թե նյութը համատեղելի է տարբեր ստեպլերների հետ, չի փոխարինում կոնկրետ Alligator մոդելների հետ արտադրողի փաստաթղթավորված համատեղելիությանը:

**«Իվաֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն՝ մասնավորապես՝**

- **Հրավերի հավելված 1.1 կետով սահմանված առաջարկվող չափաբաժին 5-ի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին /ֆիրմային անվանումը ապրանքային նշանը, մոդելը,արտադրողի անվանումը բացակայում են/:**

***Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ին և Իվաֆարմ ՍՊԸ-ին ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու մասին ծանուցումը: Ծանուցումը ստանալու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկված տարբերակ կցվել են էլեկտրոնային աճուրդի համակարգում:***

3.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

3.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են **«ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/68»** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

**«Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված արձանագրված անհամապատասխանության շտկված տարբերակը գնահատվել է բավարար:**

**«Իվաֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն՝ մասնավորապես.**

**Հրավերի հավելված 1.1 կետով սահմանված առաջարկվող չափաբաժին 5-ի, ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին**

- **Պահանջվում է ՝ RF անոթային փակման մեկանգամյա գործիքներ-Մեկ ինտեգրված կամ մոդուլային հարթակ, որն ապահովում է առաջադեմ բիպոլյար/RF անոթային փակման և ուլտրաձայնային կտրման-կոագուլյացիայի գործառույթներ: Երկու գործիքները կարող են միացված մնալ առանձին պորտերին, իսկ ակտիվացումը կատարվում է արտադրողի կողմից թույլատրված անվտանգ կարգով: Հյուսվածքային հետադարձ կապի հիման վրա էներգիայի ավտոմատ կարգավորում կամ գործառության համարժեք անվտանգ կառավարման մեխանիզմ: RF գործիքով՝ մինչև 7 մմ ներառյալ անոթների փակման արտադրողի ցուցում, ուլտրաձայնային գործիքով՝ առնվազն 5 մմ (7 մմ՝ եթե առկա է արտադրողի ցուցում): Սնուցումը՝ 100–240 VAC, 50/60 Hz: Ինքնաստուգում, սխալի/վտանգի տեսանելի և լսելի ազդանշաններ, օգտագործողին հասկանալի կառավարման միջերես:**
**Ստերիլ, մեկ պացիենտի համար նախատեսված, 5 մմ անվանական տրամագծով RF/բիպոլյար անոթային փակման գործիքներ՝ բաց և էնդոսկոպիկ կիրառման համար: Աշխատանքային երկարությունների տեսականին՝ մոտ 230, 370 և 440 մմ կամ գործառության համարժեք կարճ/ստանդարտ/երկար տարբերակներով: Ներկառուցված մեխանիկական դանակ, հյուսվածքային հետադարձ կապով կառավարվող էներգիա և մինչև 7 մմ ներառյալ անոթների փակման արտադրողի հաստատված ցուցում: Լիարժեք համատեղելիություն առաջարկվող 5-01 հարթակի հետ:**
**Ստերիլ, մեկ պացիենտի համար նախատեսված ուլտրաձայնային մկրատներ՝ փափուկ հյուսվածքների բռնման, դիսեկցիայի, կտրման և կոագուլյացիայի համար: Լիսեռի տրամագիծը՝ ոչ ավելի, քան 5.6 մմ: Աշխատանքային երկարությունների տեսականին՝ մոտ 140, 230, 360 և 450 մմ կամ գործառության համարժեք կարճ/ստանդարտ/երկար տարբերակներով: Ձեռքի և/կամ ոտնակի կառավարում, առնվազն 5 մմ անոթների փակման արտադրողի հաստատված ցուցում, իսկ 7 մմ՝ եթե պահանջը հաստատված է արտադրողի IFU-ով: Լիարժեք համատեղելիություն առաջարկվող 5-01 հարթակի և տրանսդյուսերի հետ:**
- **Ներկայացված է - Ստերիլ, մեկ պացիենտի համար նախատեսված, 5 մմ անվանական տրամագծով RF/բիպոլյար անոթային փակման գործիքներ՝ բաց և էնդոսկոպիկ կիրառման համար: Աշխատանքային երկարությունների տեսականին՝ մոտ 230, 370 և 440 մմ կամ գործառության համարժեք կարճ/ստանդարտ/երկար տարբերակներով:**

**Առկա չէ ներկառուցված մեխանիկական դանակ, հյուսվածքային հետադարձ կապով կառավարվող էներգիա և մինչև 7 մմ ներառյալ անոթների փակման արտադրողի հաստատված ցուցում: Լիարժեք համատեղելիություն առաջարկվող 5-01 հարթակի հետ բացակայում է:**

**Հիմք ընդունելով սույն ընթացակարգի հրավերի 8.11 կետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Իվաֆարմ» ՍՊԸ-ի առաջարկը 5-րդ չափաբաժնի համար և «Իվաֆարմ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

**4. Հաստատել ՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:**

**4.1** Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և ՝
**«ԲԻ ԹՈՒ ԲԻ» ՍՊԸ-ին 1, 2, 4,**
**«Մեդէքսպերտ» ՍՊԸ 3-րդ** չափաբաժների մասով առաջարկել կնքել պայմանգիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

**5. Հաջորդ նիստի կայացման մասին**

5.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվել պայմանագրի կնքման հաջորդ օրը ՝ ժամը 11:00-ին, հասցեն՝ ք. Երևան, Աճառյան 2, 212 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ____________ Է. Ծառուկյան

Անդամներ՝ ____________ Լ. Ստեփանյան

____________ Ա. Սողոմոնյան

Քարտուղար՝ ____________ Է. Պողոսյան